

ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ



ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդագրական վիճակագրության վերաբերյալ

Գործողություն 2.1: Ընթացիկ վիճակի գնահատում

Առաքելության փորձագետներ

Տիկին Մարիա Պիա Սորվիլո, Իստատ

Տիկին Ինգա Մասիուլաիտիտե-Շուկևիչ, Լիտվայի վիճակագրություն

2015թ. սեպտեմբերի 28 – հոկտեմբերի 2

Վերջնական տարբերակ



ՀՀ ազգային վիճակագրական
ծառայություն



Փորձագետների կոնտակտային տվյալներ

Մարիա Պիա Սորվիլլո

Բստաստ

Via C. Balbo 16

Բտալիա

Հեռ.՝ +390646732907

Էլ. հասցե՝ sorvillo@istat.it

Ինգա Մասիուլաիտիտե-Շուկևիչ

Լիտվայի վիճակագրություն

29 Gedimino Ave,

LT-01500, վիլնյուս

Լիտվա

Հեռ.՝ +370 5 236 4528

Էլ. հասցե՝ inga.masiulaityte@stat.gov.lt

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ.....	4
2. Գնահատում և արդյունքներ.....	4
3. Եզրակացություններ և առաջարկություններ.....	10
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք	15
Հավելված 2. Առաքելության ծրագիր	17
Հավելված 3. Հանդիպումների մասնակիցներ.....	19

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական միություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Առաքելության վերաբերյալ սույն հաշվետվությունը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակներում: Սա երկրորդ բաղադրիչի առաջին առաքելությունն էր, որի գործողություններն իրականացվել են առաքելության ծրագրի ժամանակացույցի համաձայն:

Առաքելության նպատակներն էին.

- Ընթացիկ կարգավիճակի գնահատում
- Տվյալները տրամադրողների և տվյալների աղբյուրների նույնականացում
- Նախնական քննարկում, թե ինչպես տիրապետել էլեկտրոնային տվյալներին
- Քննարկումներում ներգրավել համապատասխան շահագրգիռ կողմերին

Փորձագետները կցանկանային իրենց անկեղծ երախտիքը հայտնել բոլոր պաշտոնյաներին և անհատներին Հայաստան կատարած այցի ընթացքում աջակցության և արժեքավոր տեղեկության համար, ինչը մեծապես նպաստել է իրենց աշխատանքին: Սույն զեկույցում տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են փորձագետներին և պարտադիր չէ, որ համընկնեն ԵՄ, ՀՀ ԱՎԾ, Իտալիայի, Ֆինլանդիայի, Իտալիայի և Դանիայի վիճակագրական ծառայությունների կարծիքների հետ:

2. Գնահատում և արդյունքներ

Կենսական վիճակագրություն

Կենսական վիճակագրությունը, որն ընդգրկում է ծնունդները, մահերը, ամուսնությունները և ամուսնալուծությունները, հիմնված է քաղաքացիական կացության ակտերի գրանցման համակարգի վրա (ՀՀ քաղաքացիական կացության ակտերի ռեգիստր՝ ՔԿԱՌ), որի վերադիր մարմինը ՀՀ Արդարադատության նախարարությունն է, ինչպես նաև դրա տարածքային գրասենյակները: Երկրում տեղի ունեցող բոլոր կենսական իրադարձությունները պետք է գրանցվեն ՔԿԱՌ-ում, որը նաև յուրաքանչյուր նորածնի տալիս է նույնականացման համար: Մեկ տարեկանից բարձր անձանց գրանցումն իրականացվում է համաձայն հատուկ գործընթացի:

ՔԿԱՌ-ը կապակցված է Բնակչության պետական ռեգիստրի հետ, որը գտնվում է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության ենթակայության ներքո: Վերջինս գործ ունի ՀՀ այն քաղաքացիների հետ, որոնք անձնագիր ստանալու պահանջ են ներկայացնում կամ ցանկանում են փոխել բնակչության վայրը և նաև ունի տվյալների բազա, որտեղ գրանցված են ՀՀ-ում ապրող օտարերկրացիները:

Գյուղական համայնքների տնային տնտեսությունների (SS) և դրանց անդամների վերաբերյալ տեղեկությունը հավաքագրվում է SS հաշվառման գրքերում, որոնք

վարվում են գյուղապետարանների քարտուղարների կողմից՝ համաձայն ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի կողմից 5 տարի ժամկետով հաստատված ձևաչափերի և ցուցումների:

ՀՀ օրենսդրության համաձայն ծնունդների, մահերի, ամուսնությունների և ամուսնալուծությունների հաշվառման համար պատասխանատու են նաև հյուպատոսական գրասենյակները, հատկապես արտասահմանում ապրող ՀՀ քաղաքացիների դեպքում:

Տվյալների հավաքագրման համար իրավական հիմք են հանդիսանում «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքները և «Վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը», ինչպես նաև ՀՀ Վիճակագրական պետական խորհրդի № 11-Ն որոշումը (3.10.2003) «Վիճակագրական տեղեկության տրամադրման գործընթացի հաստատման» և «Վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրի հաստատման վերաբերյալ»: Այլ համապատասխան օրենսդրությունը վերաբերվում է քաղաքացիական ռեգիստրի հիմնադրմանը, նորածինների ծնողների և հիվանդ անդամներ ունեցող ՏՏ-ների աջակցման դրույթների կանոնակարգին:

Առաքելության առաջին հանդիպման ընթացքում շահառուի հետ համաձայնություն ձեռք բերվեց կենտրոնանալ ծնունդների և մահերի վրա, քանի որ վերջիններս կարևոր են բնակչության տեղաշարժի և իրար հաջորդող մարդահամարների միջև բնակչության քանակի ու տարիքային կառուցվածքի գնահատման առումով:

Ներկայումս տվյալների հավաքագրումն իրականացվում է թղթային համակարգով. քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային գրասենյակների կողմից հաշվառված ակտերի երկրորդ օրինակները քանակական ստուգման նպատակով ուղարկվում են ՀՀ ԱՎԾ տարածքային գրասենյակներ: Այնուհետև դրանք որակական ստուգման և մշակման նպատակով ուղարկվում են ՀՀ ԱՎԾ կենտրոնական գրասենյակ (Բնակչության, մարդահամարի և ժողովրդագրության բաժին):


Բժշկական հաստատության կողմից տրվող մահվան վկայականները կցվում են մահվան ակտերին և ուղարկվում ՀՀ ԱՎԾ:

Քանակական ստուգման հիմնական նպատակն է ճշտել՝ արդյոք ակնկալվող բոլոր ակտերը փաստացի ստացվել են քաղաքացիական ակտերի ռեգիստրից և ամբողջական կերպով ուղարկվել ՀՀ ԱՎԾ կենտրոնական գրասենյակ: ՀՀ ԱՎԾ համապատասխան անձնակազմը այնուհետև ծածկագրում է որոշ տեքստային փոփոխականներ, օրինակ՝ իրադարձության վայրը: Ձևերը ստուգվում են անհամապատասխանությունների կամ թերի տվյալներ հայտնաբերելու նպատակով և մուտքագրվում են տվյալների բազա: Այն դեպքում, եթե 1 տարեկանից բարձր անձը ՔԿԱՌ-ում գրանցված է որպես նորածին, նա ընդգրկվում է ծնունդների վիճակագրությունում անկախ իր իրական տարիքից:

Նախնական տվյալները մշակվում են եռամսյակային հրատարակության համար, մինչդեռ վերջնական տվյալները տրամադրվում են տարեկան

պարբերականությամբ և հրապարակվում են թե՛ կայք էջում, թե՛ հայերեն թղթային տարբերակով, որոշ դեպքերում նաև ռուսերեն և անգլերեն: Տվյալները հասանելի են տարածքային մակարդակով, ներառյալ 10 մարզերը և Երևանը և բաշխվում են ըստ նախկին 37 շրջանների և 4 քաղաքների:

Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված է տեղեկության հոսքը:



Քանի որ վերջերս Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրասենյակներում ներդրվել է հաշվառման առցանց համակարգ, ֆայլերն ուղղակիորեն հասանելի են, և ՀՀ ԱՎԾ-ն ներկայումս փորձարկում է ՀՀ Արդարադատության նախարարության կողմից տրամադրվող տվյալների բազայի վիճակագրական կիրառությունը: ՀՀ ԱՎԾ-ն յուրաքանչյուր ամիս կայք էջից կարող է ներբեռնել յուրաքանչյուր շրջանին վերաբերվող ֆայլը: Ներկայումս ՀՀ ԱՎԾ-ն փորձարկում է նոր համակարգը, իրականացնում է ստուգումներ ծածկագրերի ճշգրտության և ներբեռնված ֆայլերի ամբողջականության վերաբերյալ: Էլեկտրական տվյալների մշակումը պետք է դառնա ամբողջովին գործառնական և կփոխարինի նախորդ համակարգին նինչև 2016 թվականի հունվարը:

«Կենսական վիճակագրության որակի հոչակազիբը» վիճակագրական գործընթացի վերաբերյալ տրամադրում է ընդհանուր պատկեր, ներառյալ տվյալների աղբյուրների և վիճակագրական հասկացությունների

նկարագրությունը, որը կարող է օգնել սպառողներին ավելի լավ հասկանալ հրապարակված արդյունքները:

Ինչ վերաբերվում է տվյալների արտադրման յուրաժամանակությանը, այս ոլորտում խնդիրներ չկան. որակի հոչակագրում հստակեցված է, որ եռամսյակային ցուցանիշները հրապարակվում են մեկ ամսվա ընթացքում, իսկ տարեկան տվյալները՝ 6 ամսվա ընթացքում:

Ինչևէ, կարևոր խնդիր է ՀՀ ԱՎԾ-ի կողմից մշակվող տվյալների թերի ներկայացումը. չնայած կենսական իրադարձությունների հաշվառումը պարտադիր է, փորձագետների կարծիքով կարող է լինել թերհաշվառման ոչ անտեղի բաժին, հատկապես հեռավոր շրջաններում և մահվան դեպքում:

Այս խնդրի վերաբերյալ որոշ տվյալներ առկա են «Հայաստանի ժողովրդագրական և առողջական հետազոտությունը, 2010»-ի արդյունքներում, որը ցույց է տալիս, որ 2010 թվականին ծնունդների հաշվառման մակարդակը 99.6% է, թերհաշվառումը հինականում կենտրոնացած է 5 շրջաններում, մասնավորապես Կոտայք, Լոռի, Շիրակ, Արմավիր և Տավուշ: 2015 թվականին իրականացվեց Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման և կենսական վիճակագրության ազգային համակարգերի արագ գնահատում»-ը ՀՀ ԱՎԾ-ի և ՀՀ Արդարադատության և Առողջապահության նախարարությունների հետ համատեղ: Դրա արդյունքում ընդհանուր առմամբ գնահատվեց համակարգի արդյունավետությունը, ինչը հավասար էր 100-ից 80, այսինքն անհրաժեշտ էր բարելավում:

2011 թվականի մարդահամարում ներառված հարցը կարող էր օգտակար լինել հնարավոր թերհաշվառման գնահատման համար, քանի որ յուրաքանչյուր SS հարց է տրվել՝ արդյոք վերջին 12 ամիսների ընթացքում գրանցվել է հավանական ծնունդ/մահ:

Միգրացիայի վիճակագրություն


ՀՀ ԱՎԾ-ի՝ միգրացիայի վիճակագրության արտադրման, վերլուծության և տարածման համար տվյալներ հավաքագրելու իրավասությունը սահմանված է «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքով: «Պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» օրենքը սահմանում է ՀՀ վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը, որն ընդգրկում է վիճակագրական տեղեկության ձևավորման ուղղությունները, որոնք անհրաժեշտ են երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար՝ հաշվի առնելով հասանելի աղբյուրների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություն ապահովողների բեռը և ծախսերի տեսանկյունից արդյունավետությունը:

Գործում են նաև այլ համապատասխան օրենքներ վարչական տվյալների աղբյուրների հավաքագրման և կիրառման, միգրացիայի վիճակագրության արտադրման և տարածման համար. «Բնակչության պետական ռեգիստրի մասին»

օրենքը, «Օտարերկրացիների մասին» օրենքը, «Փախստականների և ապաստանի մասին» օրենքը:

Միգրացիայի վիճակագրությունն արտադրելու նպատակով ՀՀ ԱՎԾ-ն օգտագործել է տարբեր աղբյուրներ (տե՛ս Աղյուսակ 1). տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն, մարդահամար, Բնակչության պետական ռեգիստր, սահմանների կառավարման տեղեկատվական համակարգ, Միգրացիայի պետական ծառայություն և Ազգային անվտանգության ծառայություն:

Աղյուսակ 1. Միգրացիոն գործընթացների վերաբերյալ վիճակագրական տվյալների հոսքը



ՀՀ ԱՎԾ-ում միգրացիայի վերաբերյալ տեղեկության հիմնական աղբյուրը Տնային Տնտեսությունների Կենսապայմանների Ամբողջացված Հետազոտությունն է: Սա տարեկան ընտրանքային հետազոտություն է, որը հնարավորություն է տալիս հավաքագրել տեղեկություն միգրանտների ժողովրդագրական և սոցիալական հատկանիշների մասին, տնային տնտեսությունների և դրանց անդամների կենսապայմանների վերաբերյալ տեղեկության հետ համատեղ:

Բնակչության շրջանակի համար ՀՀ ԱՎԾ օգտագործում է 2011 թվականի մարդահամարի հասցեները: Բնակչության շրջանակից ՏՏԿԱՀ-ի համար ընտրվում է հասցեների ընտրանք: Օգտագործվել է երկու փուլից բաղկացած համակարգված պատահական ընտրանքի կառուցվածք, ընտրանքի չափը ստույգ է՝ 5184 տնային տնտեսություն: Հարցերին չպատասխանած ՏՏ փոխարինվել են լրացուցիչ ընտրանքից վերցված այլ ՏՏ-ով (որոնք ընտրվում են այս նպատակով): Կառուցվածքի կշիռն օգտագործվել է ՏՏԿԱՀ-ում հետազոտության հիմնական ցուցանիշների (աղքատության ցուցանիշներ և այլն), ինչպես նաև միգրանտների քանակի գնահատման համար: Միգրանտը սահմանվել է հարցին տրված դրական պատասխանի միջոցով. «2010 թվականի հունվարի 1-ից ի վեր անձը տեղափոխվել է

է այլ մարզ, կամ այլ երկիր 3 կամ ավելի ամսվա ընթացքում»: Տրվում է հարց արտագաղթի/ներքին միգրացիայի ճշգրիտ տարվա կամ ամսվա վերաբերյալ: Հետազոտությունը հնարավորություն չի տալիս նույնականացնել արդյո՞ք անձը վարչական մարմիններին հայտարարագրել է բնակության վայրի փոփոխությունը, թե՛ ոչ:

Արտագաղթյալների և ներգաղթյալների եռամսակային և տարեկան քանակը ըստ սեռի, տարիքային խմբի, շրջանի, մեկնման պատճառի, հաշվարկվել են հետազոտության արդյունքների և Բնակչության ռեգիստրի (հայտարարագրված միգրացիայի վերաբերյալ) տվյալների հիման վրա: Որակային ցուցանիշները չեն գնահատվել:

Երկարաժամկետ միգրացիայի վերաբերյալ որակի հոչակագիրը սպառողներին տրամադրում է ընդհանուր տեղեկություն միգրացիայի վերաբերյալ. տվյալների աղբյուրներ, իրավական հիմք, հիմնական հասկացություններ, ընդգրկված ժամանակահատված, ճշգրտություն, համադրելիություն, վիճակագրության հասանելիություն:

Հրապարակումների և որակի հոչակագրի հաշվետվությունների մեթատվյալները հրապարակվել են օրացույցի համաձայն:

ՀՀ ԱՎԾ իրականացրել է մարդահամար տաս տարին մեկ: Մարդահամարի արդյունքները տրամադրում են բավականաչափ տեղեկություն միգրացիայի վերաբերյալ. մարդիկ, որոնք մասնակցել են միգրացիայի գործընթացին և ապրում են երկրում, մարդիկ, որոնք արտագաղթել են և դեռևս արտասահմանում են և այլն: Մարդահամարից հետո իրականացվում է բնակչության և միգրացիայի վիճակագրության վերանայում:

ՀՀ Ոստիկանության վիզաների և անձնագրային վարչությունը պատասխանատու է Բնակչության պետական ռեգիստրի համար: Բնակչության պետական ռեգիստրի տվյալներն ունեն իրավական արժեք և հիմնված են անձնական փաստաթղթերի վրա: Բնակչության ռեգիստրը ձեռք է բերում տվյալներ ՀՀ քաղաքացիների վերաբերյալ: Բնակչության ռեգիստրում գրանցված բոլոր անձինք ստանում են անհատական նույնականացման փաստաթուղթ: Բնակչության ռեգիստրը ձեռք է բերում տվյալներ անձի՝ բնակության վայրը փոխելու մասին հայտարարությունից: Հայտարարագրված միջազգային միգրացիայի հոսքը բավականին ցածր է, դրանք չեն ներկայացնում իրական իրավիճակը: Կա մեծ տարբերություն կենսապայմանների ամբողջականացված հետազոտության և հայտարարագրված միգրացիայի միջև: Դժբախտաբար, քաղաքացին իր բնակության վայրի փոփոխությունը հայտարարագրելու բավականին դրդապատճառներ չունի: ՀՀ ԱՎԾ չի ստանում բնակչության պաշարի օրինակը:

ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը պատասխանատու է Սահմանների կառավարման տեղեկատվական համակարգի համար: Սահմանների կառավարման տեղեկատվական համակարգի տվյալներն ունեն իրավական արժեք և հիմնված են անձնական փաստաթղթերի վրա: Սահմանների կառավարման տեղեկատվական համակարգը ձեռք է բերում տվյալներ երկրից բոլոր ելքերի և մուտքերի և ստացված վիզաների վերաբերյալ: ՀՀ ԱՎԾ ամփոփ տվյալներ է

ստանում Սահմանների կառավարման տեղեկատվական համակարգից: Չկա հնարավորություն ստացված տվյալներից նույնականացնել առանձին անհատի շարժը արտասահմանում 12 ամսից ավել տևողությամբ գտնվելու ընթացքում: Սահմանային հատումների վերաբերյալ վիճակագրությունը, ստացված վիզաները ցույց են տալիս շարժման նշանակալի հոսքեր, որոնք ավելի բարձր են, քան ՏՏԿԱՀ-ի միջոցով հաշվարկված միգրանտների քանակը կամ Բնակչության ռեգիստրից ստացված հայտարարագրված միգրանտների քանակը:

ՀՀ Միգրացիայի պետական ծառայությունը ձեռք է բերում տվյալները անձնական մակարդակով ապաստան փնտրող բոլոր դիմումների մասին և կիսամյակային և տարեկան պարբերականությամբ ամբողջացված հաշվետվություն է ներկայացնում ՀՀ ԱՎԾ-ին, համաձայն ԵՄ կանոնակարգերի (# 862/2007, 2007 թվականի, հուլիսի 11):

ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը (Ժամանակավոր կամ մշտական կարգավիճակ ունեցողների վերաբերյալ տեղեկությունը տրամադրվում է ՀՀ Ոստիկանության կողմից) ձեռք է բերում օտարերկրացիների բնակության կարգավիճակի մասին տվյալներ անձնական մակարդակով և կիսամյակային կամ տարեկան պարբերականությամբ վիճակագրական հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ ԱՎԾ-ին:

Տվյալների տարբեր աղբյուրներ (հետազոտություններ, վարչական տվյալների աղբյուրներ) ցույց են տալիս տարբեր իրավիճակ: Հնարավոր է, որ սպառողները չհասկանան արդյունքների էական տարբերությունները: ՀՀ միգրացիայի վիճակագրության որակի բարելավման նպատակով անհրաժեշտ է ՀՀ ԱՎԾ-ի և վարչական տվյալների աղբյուրների միջև հետագա համագործակցություն:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Կենսական վիճակագրություն

Կենսական վիճակագրության համակարգի թույլ կողմերն են.

1. Հեռավոր շրջաններում ծնունդների և մահերի հաշվառման թերընդգրկում
2. Տնային պայմաններում մեռելաձևության թերհաշվառում
3. Ձևաթղթերում ոչ ամբողջական կերպով լրացված տեղեկություն
4. Ձևաթղթերում լրացված տեղեկության անհամապատասխանություն

Քանի որ կենսական վիճակագրությունը հիմնված է քաղաքացիական կացության ակտերի գրանցման համակարգի վրա, դրա որակն անմիջականորեն կապված է վարչական գործընթացի ամբողջականության և յուրաժամանակության հետ: Հետևաբար, ցանկացած վարչական գործողություն, որը նպատակաուղղված է գրանցման պարզեցմանը/խրախուսմանը, օրինակ՝ գրանցման վայրերը ՏՏ-ներին մոտեցնելը (ներառյալ համայնքային մակարդակը) կամ գործընթացը պարզեցնելը՝ թույլ տալով բժշկական կենտրոններին վկայականն ուղղակիորեն ուղարկել քաղաքացիական ակտերի ռեգիստր, ինչն ուղղակիորեն դրական ազդեցություն կունենար կենսական վիճակագրության համակարգի վրա:

Վիճակագրական տեսանկյունից խորհուրդ է տրվում հստակեցնել իրական թերհաշվառման չափը և տարածքային բաշխումը՝ օգտագործելով վիճակագրական և վարչական հասանելի աղբյուրները՝ թիրախ ունենալով երկրում ամենակարևոր շրջանները: ՏՏ հետազոտությունների և Առողջապահության համաշխարհային կազմակերպության գնահատման արդյունքները պետք է համալրվեն թերհաշվառման հետագա հաշվարկումներով: Հետևաբար առաջարկվում է մշակել հաշվառման հարցերի պատասխանները հնարավորինս շուտ, նախքան նոյեմբերին կայանալիք հաջորդ առաքելությունը:

Գյուղական համայնքների մակարդակով տնային տնտեսությունների գրանցման գրքերի տեղեկությունը նույնպես կարող է լինել լրացուցիչ տեղեկության աղբյուր ՔԿԱՌ տվյալների հնարավոր թերհաշվառումը գնահատելու համար: Տվյալների հնարավոր մեկ այլ աղբյուր է մարդահամարը, որը թույլ է տալիս համեմատել երեխաներին (ծննդյան տարեթվով) ՔԿԱՌ-ի արդյունքների հետ, եթե երախաների մահացությունը և, հնարավորության դեպքում, միգրացիան կարող է հաշվի առնվել: Նաև, 2001 և 2011 թվականների միջև տարբերությունը ընտրված համախմբերի համար հնարավորություն կտա մոտավոր կերպով հաշվարկել մահերի քանակը, որը կարել է համեմատել ՔԿԱՌ թվերի հետ:

Ի լրումն դրա, ՀՀ ԱՎԾ-ի կողմից պետք է պատրաստվի առավել մանրամասն թղթաբանություն վիճակագրական գործընթացի վերաբերյալ: Կարևոր է բարելավել ոչ միայն որակի վերահսկողությունը, այլ նաև նոր անձնակազմի համար ապահովել վերապատրաստման նյութեր և կարևորել բարելավման հնարավոր քայլերը: ՀՀ Արդարադատության նախարարությունը պետք է նաև տրամադրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային գրասենյակներում էլեկտրոնային տվյալների հավաքագրման համար կիրառվող ծրագրերի յուրահատկությունների վերաբերյալ մանրամասն տեղեկություն, կիրառվող նոր դիմումի փաստման նպատակով:

Այն դեպքում, եթե էլեկտրոնային ձևերին անցնելուց հետո դեռևս լինեն խնդիրներ կապված անավարտության/անհամապատասխանության հետ, տվյալների որակը բարելավելու համար պետք է կիրառվեն խմբագրման և սրբագրման մեթոդներ:

Առաջարկվում է վերապատրաստել ՀՀ ԱՎԾ անձնակազմի ՏՏ հմտությունները և կարողությունները, ինչն առավել անհրաժեշտ է տվյալների հավաքագրման թղթային համակարգից էլեկտրոնային համակարգին անցնելու առումով: Ավելին, անձնակազմը պետք է վերապատրաստվի նաև տվյալների վերլուծության և տվյալները սպառողներին ներկայացնելու առումով:

Շահառուների շրջանում և քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային գրասենյակներում ժողովրդագրական տեղեկության համապատասխանության մասին իրազեկության բարձրացմանն ուղղված գործողությունները կարող են արդյունավետ լինել: Օրինակ, վերապատրաստման ամփոփ դասընթացներ քաղաքացիական ռեգիստրավարների համար, որոնցում ներկայացվում են ժողովրդագրական տվյալների հիմնական խնդիրները և քաղաքականության պլանավորման և սոցիալական վերլուծության համար դրանց

կիրառումը, կարող է բարելավել ծնունդների և մահերի ձևերում պահանջվող ամբողջ տեղեկության հավաքագրման գործընթացը:

Եզրակացություն. նախքան նոյեմբերին կայանալիք առաքելությունը ՀՀ ԱՎԾ Բնակչության, մարդահամարի և ժողովրդագրության բաժինը պետք է տրամադրի.

- Ծնունդների և մահերի գրանցման վերաբերյալ մարդահամարի հարցերի պատասխանների մշակում, հնարավորության դեպքում մարդահամարի տվյալների վրա հիմնված թերհաշվառման չափում
- Վիճակագրական գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություն
- Հաշվառման առցանց համակարգի համար կիրառվող ծրագրային յուրահատկությունների մասին տեղեկություն (պատրաստված ՀՀ Արդարադատության նախարարության կողմից):

2015 թվականի նոյեմբերի 23-26 կայանալիք առաքելությունը նվիրված կլինի.

- Հավաքել առավել մանրամասն տեղեկություն տվյալների այլ հնարավոր աղբյուրների վերաբերյալ, մասնավորապես՝ Բնակչության ռեգիստր, տնային տնտեսությունների գրանցման գրքեր և հյուպատոսական գրասենյակներ
- Գնահատել նույնականացման միասնական համարի կիրառման առաջընթացը և դրա հնարավոր վիճակագրական օգտագործումը
- Նույնականացնել ծնունդների և մահվան վիճակագրության արտադրման գործընթացի հնարավոր թույլ կողմերը:

Միգրացիայի վիճակագրություն

Միգրացիայի վիճակագրության գնահատման հիմնական բացահայտումների հիման վրա կարող են արվել հետևյալ եզրակացությունները.

1. ՀՀ ԱՎԾ-ն օգտագործում է Տնային Տնտեսությունների Կենսապայմանների Ամբողջացված Հետազոտությունը միգրանտների քանակի և նրանց հատկանիշների գնահատման նպատակով: Հիմնական ցուցանիշների (արտագաղթյալների, ներգաղթյալների, տարբեր բաժանումներով ներքին միգրանտների՝ ընդհանուր, սեռ, հիմնական տարիքային խումբ, քաղաքաբնակ/գյուղաբնակ, քանակը) որակի ցուցանիշների (փոփոխականի գործակիցը, ստանդարտ սխալներ) գնահատումը պետք է իրականացվի չափումների ճշգրտության գնահատման համար: Որակի ցուցանիշները կարող են բացատրել՝ արդյոք SSԿԱՀ-ն տվյալների վստահելի աղբյուր է բնակչության փոքրամասնության՝ միգրանտների տարբեր խմբերի գնահատման համար:

SSԿԱՀ-ն ընտրանքային հետազոտություն է: Կառուցվածքային կշիռներն օգտագործվում են SSԿԱՀ-ում միգրանտների հիմնական ցուցանիշների գնահատման համար: Հետազոտությանը մասնակցած ռեսպոնդենտների տարբեր խմբերի (ըստ տարիքի, սեռի, մեծ քաղաքների) քանակը ոչ միշտ է, որ համասեռ է բնակչության միևնույն անձանց խմբերի հետ

(պատասխանների բացակայությունը Երևանում մոտավորապես 8 տոկոս է), գնահատումը կարող է կողմնակալ լինել: Չափաբերման կամ հետշերտավորման կշռի մեթոդները (կիրառելով ժողովրդագրական բնակչության գնահատումները, սովորական բնակչություն ըստ տարիքի և սեռի, տարածաշրջանային մակարդակի, որպես լրացուցիչ տեղեկություն) պետք է բարելավեն հետազոտության ընթացքում գնահատված բոլոր ցուցանիշների արդյունքների որակը:

2. Բնակչության շրջանակի համար ՀՀ ԱՎԾ-ն օգտագործում է 2011 թվականի մարդահամարի հասցեները: Բնակչության շրջանակից ընտրվել են հասցեների ընտրանքներ բոլոր սոցիալական հետազոտությունների համար: Բնակչության շրջանակի, ընտրանքի շրջանակի, բոլոր չափումների որակի բարելավման նպատակով բնակչության շրջանակը պետք է թարմացվի՝ ներառելով ՀՀ-ում գրանցված նոր հասցեներ: ՀՀ Անշարժ գույքի պետական կոմիտեն կրում է պատասխանատվություն սեփականության իրավունքի գրանցման համար:
3. ՀՀ ԱՎԾ-ն հրապարակում է մեթատվյալներ հրապարակումներում և որակի հայտարարագրման հաշվետվություններում: Մեթոդաբանական բացատրությունները, տվյալների հասանելի աղբյուրները, որոնք օգտագործվել են միգրացիայի վիճակագրության արտադրման համար պետք է լինեն միևնույնը տարբեր փաստաթղթերում: Սպառողներին պետք է տրամադրվեն առավել մանրամասն մեթոդաբանական բացատրություններ տարբեր բաժանումներով միգրանտների քանակի գնահատման և հետազոտության մեթոդոլոգիայում կիրառված վարչական տվյալների աղբյուրների վերաբերյալ:
4. ՀՀ ԱՎԾ-ն տարեկան պարբերականությամբ հրապարակում է «Հայաստանի ժողովրդագրական ձեռնարկ»-ը: ՏՏԿԱՀ-ից վերցված նախորդ տարվա (ոչ եռամյա ժամանակահատվածը)՝ միգրանտների վերաբերյալ վիճակագրությունը պետք է հրապարակվի սպառողների համար: Պատմական համադրության համար պետք է օգտագործվի ՏՏԿԱՀ-ից վերցված նախորդ տարվա վիճակագրությունը: Օրինակ, 2014 թվականի միգրանտների քանակը հաշվարկվել է 2015 ՏՏԿԱՀ-ից, 2013 թվականի միգրանտների քանակը հաշվարկվել է 2014 ՏՏԿԱՀ-ից:
5. ՀՀ ԱՎԾ-ն օգտագործում է տվյալներ Բնակչության ռեգիստրից, սահմանների կառավարման տեղեկատվական համակարգից ամփոփ տեսքով: Չկա հնարավորություն ստուգման, վերլուծության, գնահատման նպատակով ձուլել վարչական տվյալների աղբյուրների տվյալները ՏՏԿԱՀ-ի տվյալների հետ: ՀՀ միգրացիայի վիճակագրության որակի հետագա բարելավման նպատակով անհրաժեշտ է հետագա համագործակցություն ՀՀ ԱՎԾ-ի և Բնակչության ռեգիստրի, Սահմանների կառավարման տեղեկատվական համակարգի միջև, որը հասանելի կդարձնի անձնական տվյալները (անհատական մակարդակով): ՀՀ ԱՎԾ-ում անհատական

տվյալների կառավարումը կպահանջի լրացուցիչ SS մասնագետներ, SS միջոցներ:

ՀՀ ԱՎԾ-ի Բնակչության, մարդահամարի և ժողովրդագրության բաժնին ներկայացվել են նաև նոյեմբերին կայանալիք առաքելությանը վերաբերվող որոշ առաջարկություններ.

- Գնահատել ըստ տարբեր բաժանումների միգրանտների որակի ցուցանիշները SSԿԱՀ-ից,
- Ապահովել առավել մանրամասն մեթոդոլոգիա, բնորոշում ըստ տարբեր բաժանումների արտագաղթյալների, ներգաղթյալների, բնակչության քանակի սահմանման համար,
- Առավել մանրամասն վերլուծել Բնակչության պետական ռեգիստրի, Սահմանների կառավարման տեղեկատվական համակարգի տվյալները (նպատակները, փոփոխականները, ընդգրկվող ժամանակահատվածը, սահմանումները և այլն):

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք

ԵՄ ԹՎինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15

2015թ. սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 2

Բաղադրիչ 2. Ժողովրդագրական վիճակագրություն

Գործողություն 2.1. Ընթացիկ կարգավիճակի գնահատում

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքներ և չափանիշներ

Պարտադիր արդյունքներ.

- Կենսական (բնական շարժի) վիճակագրության տվյալների հավաքագրման բարելավված մեխանիզմներ(թղթային աղբյուրներից անցում էլեկտրոնայինի), ընդգրկվածություն, յուրաժամանակություն և որակ(2017թ. հուլիս)
- Միգրացիայի վիճակագրության տվյալների հավաքագրման բարելավված մեխանիզմներ, ընդգրկվածություն, յուրաժամանակություն և որակ(2017թ. հուլիս)

Չափանիշներ.

- Կենսական վիճակագրության արդիականացված մեթոդաբանություն (2016թ. հոկտեմբեր)
- Միգրացիայի վիճակագրության արդիականացված մեթոդաբանություն (2017թ. ապրիլ)
- Իրականացվել և հրապարակվել է բարելավված կենսական վիճակագրություն(2017թ. հուլիս)
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմը վերապատրաստվել է կենսական և միգրացիայի վիճակագրությունների գծով (2017թ. հուլիս)

1. Գործողության նպատակը

- Ընթացիկ իրավիճակի գնահատում
- Տվյալները տրամադրողների և տվյալների աղբյուրների նույնականացում
- Նախնական քննարկում, թե ինչպես տիրապետել էլեկտրոնային տվյալները
- Քննարկումներում ներգրավել համապատասխան շահագրգիռ կողմերին

2. Գործողության սպասվող արդյունքը

- Ընդհանուր պատկերացում կենսական և միգրացիայի վիճակագրության հավաքագրման ընթացիկ իրավիճակի մասին
- Ընդհանուր պատկերացում մեթոդաբանության և իրավական ակտերի մասին
- Ընդհանուր պատկերացում տվյալների որակի մասին
- Նախանշվել են կենսական և միգրացիայի վիճակագրության տվյալների հնարավոր նոր աղբյուրները

- Հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագիրը սահմանված է (2.2-ը նախատեսված է 2015թ. նոյեմբերի 23-26-ը)

3. Մասնակիցները

ՀՀ ԱՎԾ

Բաղադրիչների ղեկավարներ

- Պրն Գագիկ Գևորգյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Տկն Կարինե Կույունջյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ

Այլ աշխատակիցներ

- Տկն Աննա Թոխաթյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ
- Տկն Նարինե Գրիգորյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ
- Տկն Աննա Գրիգորյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջին կարգի մասնագետ
- Տկն Մուսաննա Ազատյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի երկրորդ կարգի մասնագետ

ԱԵ փորձագետներ

Տկն Մարիա Պիա Սորվիլլո, փորձագետ, Իտալիայի վիճակագրական ծառայություն
Տկն Բնգա Մասիուլայտիտե-Շուկևիչ, փորձագետ, Լիտվայի վիճակագրության
ծառայություն

Գործողությանը մասնակցող այլ շահագրգիռ կողմեր

Ներկայացուցիչներ

- ՀՀ արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից,
- Առողջապահության նախարարությունից
- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունից
- ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից
- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից

նույնպես կներգրավվեն:

Հավելված 2. Առաքելության ծրագիր

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երկուշաբթի, կեսօր	Հյուրանոց /ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը
Երկուշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ քաղաքիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ընթացիկ իրավիճակի ուսումնասիրություն և գնահատում
Երեքշաբթի, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ քաղաքիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Տվյալները տրամադրողների և տվյալների աղբյուրների նույնականացում, մեթոդաբանության և իրավական ակտերի ուսումնասիրություն
Երեքշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ քաղաքիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ընդհանուր պատկերացում կենսական և միգրացիայի վիճակագրության տվյալների հավաքագրման որակի մասին
Չորեքշաբթի, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում շահագրգիռ կողմերի հետ	Հանդիպում շահագրգիռ կողմերի հետ
Չորեքշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ քաղաքիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Կենսական և միգրացիայի վիճակագրության տվյալների հնարավոր նոր աղբյուրների նույնականացում
Հինգշաբթի, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ քաղաքիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Կենսական և միգրացիայի վիճակագրության տվյալների հնարավոր նոր աղբյուրների նախանշում
Հինգշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ քաղաքիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Մինչև հաջորդ գործողությունը կատարվելիք աշխատանքի սահմանում
Ուրբաթ, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ քաղաքիչի ղեկավարի հետ	ԱԵ փորձագետների բացահայտումների ներկայացում և ձեռքբերված եզրակացությունների համաձայնեցում
Ուրբաթ, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Չպլանավորված հանդիպումներ	Վեջնական պարզաբանումներ ԱԵ փորձագետների հետ, հաշվետվության պատրաստում և ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին

Ուրբաթ, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ԱԵ ծրագրի ղեկավարի հետ	Եզրակացություններ, առաջարկություններ և ՇԵ փորձագետների հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագիր
-------------------------	--------	---------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------------------

Հավելված 3. Հանդիպումների մասնակիցներ

ՀՀ ԱՎԾ

Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Կարինե Կոյունջյան, Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ
Աննա Թոխարյան, Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
Նարինե Գրիգորյան, Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
Աննա Գրիգորյան, Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
Սոնա Շահգելդյան, ՏՏ վարչություն
Վարսիկ Սենեքերիմյան, Միջազգային վիճակագրական համագործակցության
բաժին
Արմինե Մարտիկյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և
հասարակայնության հետ կապերի բաժին

Արտաքին շահառուներ

Մարիամ Գևորգյան, ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն
Սեդա Սիմոնյան, ՀՀ Առողջապահության նախարարություն, Վիճակագրության
բաժին
Վահան Բախշեցյան, ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ
իրավիճակների նախարարություն
Սուրեն Սարգսյան, ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն
Անի Մխիթարյան, ՀՀ Արդարադատության նախարարություն

ԹՄԽ աշխատակազմ

Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, ԹՎինինգի մշտական խորհրդատու
Մարգարիտ Բեջանյան, ԹՄԽ օգնական
Անուշ Պողոսյան, ԹՄԽ թարգմանիչ